

Գոնգալո Գաստրո Դե Լա Մատա
Տնօրեն
Տեսչական հանձնաժողով

IPN հայտ RQ 16/01

26 Ապրիլի 2016թ.

ԾԱՆՈՒՑՈՒՄ ԳՐԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ստուգման հայտ

Ոռոգման համակարգերի արդիականացման ծրագրի (P127759), ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ամփոփում

1. 2016 թվականի մարտի 18-ին տեսչական հանձնաժողովը («Հանձնաժողով») ստացել է Գեղարդալ ճի ինքնահոս ոռոգման համակարգից տուժող Գողթ համայնքի բնակիչների ստուգման հայտը («Հայտ»)՝ կապված Հայաստանի ոռոգման համակարգի արդիականացման ծրագրի («Ծրագիր») հետ: Հայտատուները խնդրել են Հանձնաժողովին իրենց ինքնուրույն ներքին գաղտնի պահել:

2. Ծրագիրը նախատեսում է չորս համակարգերի վերափոխում, ներառյալ Գեղարդալ իճ համակարգը՝ պոմպային ոռոգման համակարգից՝ ինքնահոս ոռոգման համակարգի:¹ Հայտատուները մտահոգված են, որ Ծրագիրը կարող է հանգեցնել ոռոգման ջրի պակասի իրենց համայնքում, որը ջուր է օգտագործում Գեղարդալ իճ ջրամբարից: Նրանք պնդում են, որ Ծրագրի հիդրոլոգիական տվյալները սխալ են և Ծրագրի շրջանակներում առկա է խորհրդատվության և մասնակցության պակաս:

3. Հայտատուները խնդրում են դադարեցնել Ծրագրի \$ինսանսավորումը, մինչև իրենց համայնքում հանրային լսումներ անցկացվելը: Նրանք նաև խնդրում են, որ միջազգային փորձագետների մի խումբ առնվազն մեկ տարվա ընթացքում և տարվա տարբեր եղանակներին իրականացնի Կարմիր գետի հիդրոլոգիական չափումներ՝ առկա տվյալները բարելավելու նպատակով:

¹ Ծրագրի գնահատման փաստաթուղթ (ԾԳՓ) ենթադրում է «Էլեկտրաէներգիայի օգտագործման խնայողությունն [...] ճնշումային ոռոգման համակարգի փոխակերպում ինքնահոս ոռոգման համակարգի՝ դրանով իսկ վերացնելով պոմպային ծախսերը [...]», ԾԳՓ, էջ 24:

Ծրագիրը

4. Ոռոգման համակարգի արդիականացման ծրագիրը հաստատվել է Համաշխարհային բանկի գործադիր տնօրենների խորհրդի («Խորհուրդ») կողմից 30 միլիոն ԱՄՆ դոլար գումարով (ՎՄԲ-ի նպատակային ներդրումային վարկ) 2013 թվականի մայիսի 22-ին, որը պետք է ավարտվի 2017 թվականի հունիսի 30-ին: Ծրագրի ընդհանուր գումարը կազմում է 37,5 միլիոն ԱՄՆ դոլար: Սա B կատեգորիայի ծրագիր է, որն առաջացրել է հետևյալ անվտանգության ռազմավարությունները՝ բնապահպանական գնահատում (OP/BP 4.01), վնասատուների կառավարում (OP/BP 4.09), ոչ կամավոր վերաբնակեցում (OP/BP 4.12), դամբաների անվտանգություն (OP/BP 4.37) և միջազգային ջրային ուղիների ծրագրեր (OP/BP 7.50):

5. Այս պահանջի համաձայն՝ Ծրագրի զարգացման նպատակն է «նվազեցնել օգտագործվող էլեկտրաէներգիայի ծախսը և բարելավել ոռոգման արդյունավետությունը դեպի թիրախային ոռոգման համակարգեր»: Համապատասխան Ծրագրի կետ² 1-ը (Ոռոգման համակարգի արդիականացում, \$33,1 միլիոն), և ենթակետ՝ 1.1 (պոմպային ոռոգման համակարգի փոխակերպումը ինքնահոս ոռոգման համակարգի, \$24,7 միլիոն): Վերջինս \$ինանսավորում է ինքնահոս ոռոգման համակարգերի կառուցումը չորս շրջաններում, որոնցից մեկը Գեղարդալի ճն է:

6. Այս տարածքում, Ծրագիրն Ազատ գետի և ջրամբարի գոյություն ունեցող յոթ պոմպակայաններից երեքը կփոխարինի ինքնահոս ոռոգման համակարգով՝ ջուր մատակարարելով Գեղարդալի ջրամբարից: Այս աշխատանքը ներառում է ջրամբարի ամբարտակի բարձրության ավելացում 1.6 մետրով՝ ծավալը մեծացնելով 2,4 միլիոն մ³-ից մինչև 3,4 միլիոն մ³ և կառուցել 23 կմ ճնշումային խողովակաշար և հարակից կառուցվածքներ:

Հայտում ներկայացված մտահոգությունները

7. Հայտատուները մտահոգված են, որ Գողթ համայնքի ոռոգման ջուրը, որը սպասարկվում է Գեղարդալի ճն ջրամբարից, կպակասի: Նրանք հավաստիացնում են, որ վերջինս վեց տարիների ընթացքում ջրամբարը լիարժեք լցվել է երկու անգամ: Համաձայն Հայտի, ջրամբարը սնվում է Կարմիր գետից, որի հիդրոլոգիական տվյալներն ըստ Ծրագրի «չ են համապատասխանում իրականությանը», քանի որ Կարմիր գետը

² Ծրագիրը բաղկացած է երեք բաղադրիչից՝ (i) ոռոգման համակարգի արդիականացում (\$33,1 միլիոն), (ii) կառավարման տեղեկատվություն (1,7 միլիոն) և (iii) Ծրագրի կառավարում և աջակցություն Ջրօգտագործողների միություն (\$2,7 միլիոն):

Ծրագրի փաստաթղթերում նշված ծավալի շրատարողությունը չունի: Զետնաբար, Ծրագրով նախատեսված փոխումն ինքնահոս ոռոգման համակարգի չի կարող հաջողությամբ իրականացվել:

8. Հայ տատուները բողոքում են նաև խորհրդատվության և մասնակցության պակասից: Նրանք պնդում են, որ 2014 թվականի նոյեմբերի 19-ի հանրային լսումների ընթացքում Գողթ համայնքը դեմ էր Ծրագրին, սակայն հետագայում այլ լսումներ իրենց համայնքում չկազմակերպեցին՝ դրանով իսկ խախտելով իրենց իրավունքները: Վերջապես Հայ տատուները խնդրեցին, որ Ծրագիրը դադարեցվի մինչև նոր հանրային լսումներ և Կարմիր գետի հիդրոլոգիական չափումների իրականացումը:

Նախնական փորձաքննություն

9. Հայ տը ստանալուց հետո, Հանձնաժողովն իր նախնական փորձաքննությունն է իրականացրել և ճշտել, որ Հայ տը ներկայացվել է երկու և ավելի անձանց կողմից և ներառում է հիմնական տեղեկատվություն, որը պահանջում է Հանձնաժողովի գործառնական ընթացակարգերը: Հայ տը ներառում է Գողթ համայնքի 98 բնակիչների ստորագրությունները, ովքեր Հանձնաժողովին խնդրել են գաղտնի պահել իրենց ինքնությունները: Հանձնաժողովը նաև հաստատել է, որ խնդիրները փոխանցվել են նաև Բանկի աշխատակազմին: Հայ տատուները 2015 թվականի նոյեմբերի 24-ին բողոք-դիմում են ներկայացրել Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի աշխատակազմին: 2015 թվականի դեկտեմբերի 21-ին Բանկը պատասխան նամակ է հղել՝ նշելով, որ Հայ տատուների պատճառաբանություններն անբավարար են:

10. Հանձնաժողովը ստուգել է, որ Հայ տը համապատասխանում է գրանցման պահանջներին. (i) խնդրանքը անլուրջ, անհեթեթե կամ անանուշ է, (ii) Ծրագիրն աջակցվում է Բանկի կողմից, (iii) Ծրագրի առնվազն մեկ բաղադրիչ, որը Հայ տի առարկա է, կարող է կապված լինել ենթադրյալ վնասի հետ, (iv) Բանկի \$ինասավորումը Ծրագրին փակված չէ, (v) Բանկի \$ինանսական հատկացումները 95 տոկոսից³ քիչ են, (vi) Հայ տի առարկան չի վերաբերում գնումների խնդիրներին և (vii) Հայ տը նախկինի նման չէ, որի համար Հանձնաժողովն արդեն առաջարկություն է արել:

11. Ծրագիրը և Հայ տում բարձրացված խնդիրներն ավելի լավ հասկանալու համար՝ Հանձնաժողովը հեռախոսազանգեր է իրականացրել 2016 թվականի մարտի 21-ին: Հանձնաժողովը նաև հանդիպել է Բանկի ղեկավարությանը 2016 թվականի ապրիլի 7-ին: Բանկի աշխատակազմը բացատրել է, որ նրանք մոտավորապես

³ Խնդրանքը ներկայացնելու պահին Ծրագրին գումարի 62 տոկոսը հատկացված էր:

մեկ տարի է տեղյակ են եղել Ճրագրի վերաբերյալ բողոքներից և ակտիվորեն շփվել են համայնքի և կառավարության հետ: Բանկի ղեկավարությունը տեղեկացրել է Յանձնաժողովին ոլորտի խնդիրների մասին և տրամադրել է թարմացված տեղեկատվություն Ճրագրի իրականացման առկա իրավիճակի վերաբերյալ:

Յայտի գրանցում

12. Ինչպես նշված է ՎՉՄԲ Յանձնաժողովի որոշման («Որոշում») 17 կետում, «Յանձնաժողովի նախագահը ստուգման պահանջը ստանալու և պես պետք է տեղեկացնի գործադիր տնօրեններին և Բանկի նախագահին»: Այս ծանուցմամբ տեղեկացնում եմ ձեզ, որ ես գրանցել եմ այս Յայտը 2016 թվականի 26 ապրիլին, որը նաև հանդիսանում է այս ծանուցագրի ամսաթիվը:

13. Յանձնաժողովի գրանցումը պատիժ չի նախատեսում կապված ստուգման հայտի հետ: Ինչպես ներկայացված է Որոշման 18 կետում, և «խորհրդի երկրորդ վերանայման տեսչության եզրակացություններին» (1999 Պարզաբանում) կետեր 2 և 8-ում, Բանկի ղեկավարությունը պետք է Յանձնաժողովին տրամադրի ստուգման հայտում բարձրացված խնդիրների պատասխանը 21 աշխատանքային օրվա ընթացքում, մինչև 2016 թվականի մայիսի 25-ը: Խնդրո առարկան, որ ղեկավարությունը պետք է գբաղվի ի պատասխան Յայտի, շարադրված է 1999 Պարզաբանման 3-րդ և 4-րդ կետերում:

14. Ղեկավարության պատասխանը ստանալուց հետո Յանձնաժողովը, ինչպես նշված է 1999 Պարզաբանման մեջ և ինչպես ներկայացված է Որոշման 19-րդ կետում, «կորոշի, թե արդյո՞ք Յայտը համապատասխանում է [Որոշման] 12-14 կետերում սահմանված իրավասության չափորոշիչներին և գործադիր տնօրեններին պետք է հարցն ուսումնասիրելու առջարկություն անի»: Յայտը համարակալվել է՝ IPN հայտ RQ 16/01:

Յարգանքներով,

Գոնգալո Դե Լա Մատա
Տնօրեն

Կից փաստաթղթեր

Պ-ն .Զիմ Յոնգ Կիմ, Նախագահ
Վերակառուցման և զարգացման միջազգային բանկ

Գործադիր տնօրեններ և տեղակալներ
Վերականգման և զարգացման միջազգային բանկ

Գեղարդալիճ ինքնահոս ոռոգման համակարգից տուժող Գողթ
համայնքի բնակիչներ (Ջայ տատուները գաղտնի են)